

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/8

1 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Տամա էլեկտրոն» ՍՊԸ 07.08.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից կիրառված «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքը վերանայելու վերաբերյալ:

«Տամա էլեկտրոն» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

2015 թ-ի մարտի 31-ի աշխատանքային օրվա ավարտից հետո՝ ժամը 17:18 սահմաններում, «Տամա էլեկտրոն» ՍՊԸ-ի կողմից (այսուհետ նաև ընկերություն) էլեկտրոնային եղանակով ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ է ներկայացվել 2015 թ-ի մարտ ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկը: Վերջինս առանց որևէ խնդրի ընդունվել է ՀՀ ՖՆ կողմից, որի համար ընկերությունն էլեկտրոնային եղանակով ստացել է ծանուցում: Ընկերությունը 2015 թ-ի մայիսի 26-ին ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ սպասարկման սրահից դիմել և ստացել է հարկային պարտավորությունների (գերավճարների) մնացորդների վերաբերյալ տեղեկանք, որում արտացոլված մնացորդներից պարզ է դառնում, որ ընկերության կողմից ներկայացված մարտ ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկն ընդունված է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից և մասնակցում է ընկերության անձնական քարտում վարվող հաշվարկներում: Հետագայում ընկերությունը 23.07.2015 թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ-ից ստացել է թիվ 20615 առ 20.07.2015թ. գրությունը, որտեղ ընկերությանը տեղեկացվել է, որ մարտ ամսվա հաշվետվությունը չի համապատասխանում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածի պահանջներին և չի կարող համարվել օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմին ներկայացված հաշվետվություն ու առաջարկվում է սեղմ ժամկետներում ներկայացնել մարտ ամսվա հաշվարկը: Միաժամանակ հիշեցվել է, որ նշված հաշվարկի նկատմամբ կիրառվելու են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի դրույթները:

Ընկերությունը ստանալով վերը նշված գրությունը հաջորդ իսկ օրը դիմել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ սպասարկման սրահ և ստացել է հարկային պարտավորությունների (գերավճարների) մնացորդների վերաբերյալ նոր տեղեկանք, որում արտացոլված մնացորդներից կրկին պարզ է դառնում, որ ներկայացված մարտ ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկը ընդունվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից և մասնակցում է ընկերության անձնական քարտում վարվող հաշվարկներում: Հետագայում կապ հաստատելով ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ համապատասխան աշխատակիցների հետ պարզվել է, որ վերը նշված հաշվարկն ընդունված չէ և այդ հաշվարկով առաջացած և վճարված հարկը արտացոլված է որպես գերավճար:

Ընկերությունը 30.07.2015 թ-ին մարտ ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկը ներկայացրել է ևս մեկ անգամ, որը ՀՀ ՖՆ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի կողմից ճանաչվել է որպես ճշգրտված հաշվարկ: Այնուհետև, ընկերությունը 04.08.2015 թ-ին ՀՀ ՖՆ

Կենտրոնի ՀՏ-ից դիմել և ստացել է հարկային պարտավորությունների (գերավճարների) մնացորդների վերաբերյալ տեղեկանք, որում արտացոլված է եկամտային հարկի պարտավորություն, որն էլ առաջացել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքի կիրառումից:

Ընկերությունը գտնում է, որ կատարված գործողություններն անհիմն են և չեն բխում օրենքի պահանջներից, հետևյալ հիմնավորմամբ և պատճառաբանությամբ:

Ընկերությունը գտնում է, որ տվյալ դեպքում բովանդակային առումով կատարել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1 հոդվածի 4-րդ պարբերությամբ իր վրա դրված պարտականությունը, այն է՝ մարտ ամսվա վերջին աշխատանքային օրվա ավարտից հետո Ընկերությունը ներկայացրել է մարտ ամսվա հաշվարկը:

Բացի այդ, վերլուծելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածն ընկերությունը կարծում է, որ հոդվածով նախատեսված տուգանքը հետապնդում է միայն մեկ նպատակ, այն է՝ կանխարգելել հարկ վճարողների կողմից հաշվարկ-հաշվետվությունների ներկայացման շարունակաբար ուշացումը:

Տվյալ դեպքում ընկերությունը դեռ մի բան է շուտ է ներկայացրել 2015 թ-ի մարտ ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկը: Այսինքն, Ընկերությունն իր վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարել է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 7-րդ հոդվածների դրույթներով, ընկերությունը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ կողմից ընկերության նկատմամբ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն հաշվարկված 169,715 դրամ տուգանքի գումարը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Տամա էլեկտրոն» ՍՊԸ կողմից 2015 թ-ի մարտ ամսվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամփոփ հաշվարկը (այսուհետ նաև Հաշվարկ) ներկայացվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ: Մասնավորապես, 2015 թ-ի մարտ ամսվա համար Հաշվարկը էլեկտրոնային եղանակով ներկայացվել է մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը՝ 31.03.2015 թ-ին:

Թեև համակարգի կողմից Հաշվարկը համարվել է վավեր, սակայն ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 20.07.2015 թ-ի գրությամբ գանգատաբերին տեղեկացվել է Հաշվարկը «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 16.1-րդ հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ ներկայացված լինելու մասին: Արդյունքում, ընկերության կողմից ներկայացված Հաշվարկը դիտվել է չներկայացված, ինչը հիմք է հանդիսացել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը կիրառելու համար:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել

պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ 2015 թ-ի մարտ ամվա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամփոփ հաշվարկը գանգատաբերի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետից շուտ է ներկայացվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ գանգատաբերի վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, կատարված են: Մասնավորապես, թեև ընկերության կողմից խախտվել է հարկային մարմնին ներկայացվող հաշվետվությունների ընթացակարգը, սակայն դրա արդյունքում պետական բյուջեին վնաս չի պատճառվել, չի թաքցվել հարկվող շրջանառությունը, ինչպես նաև՝ վճարման ենթակա պարտավորությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ու մ է՝

«Տամա էլեկտրոն» ՍՊԸ 07.08.2015 թ-ի գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

